ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արմենֆարմ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2022/16-15-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
48	Սուրֆանիոս	Անիոս Լաբորատորիաներ	դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ- 2,5%, N,N-բիս-(3-ամինոպրոպիլ) դոդեցիլպրոպան 1,3-դիամին -5,1% (ԿԱՄ), ինչպես նաև օժանդակող բաղադրիչներ՝ էթիլենդիամինտետրաքացախաթթու, ոչ իոնածին մակերեսային ակտիվ նյութեր (ՄԱՆ), կայունացուցիչ, հոտավետ նյութեր և ջուր: Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, տուլարեմիա, լեգիոնելոզ) նկատմամբ՝ ինչը հաստատված է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով: Փաթեթավորումը- 1լիտր ծավալով պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվում է 0,25%-անոց 400 լիտր աշխատանքային լուծույթ, որն ապահովում է հակաբակտերիալ (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա, բորբոսասնկեր) ազդեցությունը60 րոպեում (ինչը

			հաստատված է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Աշխատանքային լուծույթը ունի նաև լվացող և հոտակլանիչ ազդեցություն: Աշխատանքային լուծույթի պատրաստումը սենյակային ջերմաստիճանային պայմաններում՝ 15°C-ից 25°C-ը: Ախտահանումը իրականացվում է սրբելու, ցողելու և թրջելու եղանակով: Ախտահանիչ նյութի pH-12,3: Ախտահանիչ նյութի հակամանրէային ազդեցությունը պահպանվում է 3 ժամվա ընթացքում: Աշխատանքային լուծույթով սենքերում սրբելու եղանակով մակերեսների մշակման ժամանակ անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործումը անհրաժեշտություն չկա և կարելի է կատարել հիվանդի ներկայությամբ: Ինչպես նաև հատակի ընթացիկ մաքրման ժամանակ հետագա ջրով լվանալու պահանջ չկա (ինչը հաստատված է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվելու են համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Օգտագործվում է մակերեսների, գույքի, սպիտակեղենի, լաբորատոր սպասքի և այլ պարագաների ախտահանման և մաքրման համար: Վտանգավորության աստիճանը- 3-րդ, 4-րդ դաս: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի հավաստագրի/երի առկայություն: ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգի առկայություն: Նոր է, չօգտագործված: Հանձնելու պահին ամբողջ պիտանիության ժամկետի առնվազն 1/2-ի առկայություն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Արմենֆարմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2022/16-15-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
48			